ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի գլխավոր խնդիրը հայկական միլիցիայի և ոստիկանության մարտական և աշխատանքային ավանդույթների լայնորեն և բազմակողմանի պրոպագանդումն է, ոստիկաններին համոզված հայրենասերներ դաստիարակելը, որոնք հպարտ պետք է լինեն մեր հայրենիքի անցյալի և ներկայի համար, կարգապահության և օրինականության ամրապնդմանը նպաստելը, դաստիարակչական աշխատանքների ձևերի կատարելագործումը, ինչպես նաև ոստիկանության հեղինակության ամրապնդումը:

1969թ. ՀՍՍՌ ՆԳ մինիստր Վլադիմիր Դարբինյանն ընդունում է որոշման նախագիծ «Հայկական ՍՍՌ ներքին գործերի մինիստրության թանգարան ստեղծելու մասին»:

Թանգարանն ունենալու էր հետևյալ բաժինները.

Հայաստանի ՆԳ մարմինների պատմությունը.

1. Միլիցիան քաղաքացիական կռիվներում.
2. Միլիցիան բանդիտիզմի ու կուլակության դեմ մղվող պայքարում.
3. Միլիցիան Մեծ Հայրենականում.
4. Կալանավայրերը որպես հանցագործների դաստիարակության օջախներ.
5. Օպերատիվ աշխատանքներ /ըստ փուլերի/.
6. Գիտություն և տեխնիկա.
7. Հայաստանի ՆԳ նախարարության մարմինները արդի ժամանակ /ըստ ենթաբաժինների/:

Սակայն նշված նախագիծը չի իրականացվել:

ՀՍՍՀ ՆԳՄ մարտական և աշխատանքային փառքի թանգարանը 1977թ. նոյեմբերի 10-ին բացվել է ՍՍՀՄ ՆԳՄ Երևանի միլիցիայի միջնակարգ դպրոցի շենքում՝ սովետական միլիցիայի կազմավորման 60-ամյակին նվիրված: 1994թ. թանգարանը տեղափոխվել է ՀՀ ոստիկանություն, այնուհետև ՀՀ ոստիկանության Ուսումնական կենտրոն: ՀՀ ոստիկանության պետ Ա.Սարգսյանի նախագահությամբ ՀՀ ոստիկանության կոլեգիան 2010թ. օգոստոս ամսին հանձնարարել է առաջարկություններ ներկայացնել թանգարանի աշխատանքները վերսկսելու

ուղղությամբ: 2013թ. հունիսին ՀՀ ոստիկանության վետերանների խորհրդի նախագահի կողմից նամակ է ուղարկվել ՀՀ ոստիկանության պետին նույն առաջարկությամբ: Ոստիկանության կրթահամալիր կազմավորվելու կապակցությամբ 2013թ. օգոստոսին ՀՀ ոստիկանապետի հրամանի համաձայն՝ թանգարանը վերանվանվել է ՀՀ ոստիկանության պատմության թանգարան և տեղափոխվել ՀՀ ոստիկանության կրթահամալիր: **Թանգարանը վերսկսել է աշխատանքները 2015թ. մայիսի 8-ից՝ ի նշանավորումն Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի:**

Թեմատիկ պլանի համաձայն թանգարանը բաղկացած է 6 բաժնից:

1-ին բաժինը վերաբերում է Հայաստանի հնագույն ժամանակաշրջանին: Իտալացի նկարիչ Ջուլիանո Ձասսոյի 19-րդ դարի վերջի ստեղծագործությունն իր թագավորի հանդեպ ոստիկանության գործառույթներ իրականացնող ոստանիկի կողմից նվիրվածության աննախադեպ մի պատմություն է. Պարսկաստանի սասանիդների կառավարության ժամանակ մեր թվարկության 367թ. պարսից Շապուհ թագավորն իր մոտ է հրավիրել Հայոց Արշակ 2-րդ թագավորին և խաբեությամբ բանտ նստեցրել: Իր մոտ ծառայության է վերցրել Հայր մարզպետ Դրաստամատին: Քուշանների դեմ պայքարում Դրաստամատը փրկել է Շապուհի կյանքը: Այս քաջագործության համար Դրաստամատին թույլատրվել է այցելել Անհուշ բերդում բանտված Արշակ 2-ին: Բերդում «Վայ ինձ՝ Արշակիս, որտեղից ուր ընկա և ինչ օրի հասա» ասելով Արշակը ինքնասպան է լինում: Ինքնասպան է լինում նաև Դրաստամատը: Ահա մի ուսանելի պատմություն հայ ոստիկանի՝ իր թագավորին կյանքի գնով հավատարմությունն արտահայտելու մասին:

2-րդ մասն առնչվում է արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանին՝ 1828 թվականի փետրվարից մինչև 1917 թվականը: Ցուցադրված են 1914թ. Դիլիջան քաղաքում պրիստավը, քյոխվայի ընտանիքը և ժանդարմերիայի գործառույթներ իրականացնող կազակները:

3-րդ մասն առնչվում է Հայաստանի առաջին հանրապետության ժամանակաշրջանին՝ 1918 թվականի մայիսից մինչև 1920 թվականի

դեկտեմբեր, Հայաստանի առաջին ներքգործնախարար Արամ Մանուկյանից մինչև Սիմոն Վրացյան:

1918 թվականի մայիսի 28-ին «Դաշնակցություն» կուսակցության գլխավորած Հայոց Ազգային Կենտրոնական Խորհուրդն իրեն հռչակեց «Հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»:

Ընդորում, ինչպես ասեցինք, առաջին նախարար եղել է Սարգիս կամ Սերգեյ Հովհաննիսյանը /Արամ Մանուկյան կնքվել է Վանի ինքնապաշտպանության ժամանակ/, որը պաշտոնավարել է 1918 թվականի հուլիսից մինչև իր մահը՝ 1919 թվականի հունվարի 29-ը:

Լուսաբանված են նաև մյուս նախարարներ՝ Ալեքսանդր Խատիսյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Սարգիս Արարատյանը և Սիմոն Վրացյանը:

4-րդ մասը լուսաբանում է Խորհրդային ժամանակաշրջանը՝ 1920 թվականից մինչև 1940 թվականը:

Լուսանկարում պատկերված են ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին կից՝ հակահեղափոխության և սաբոտաժի դեմ պայքարի համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի նախագահ, ազգությամբ լեհ Ֆելիքս Ձերժինսկին և Անդրկովկասի նույնանման հանձնաժողովի նախագահ Գևորգ Աթարբեկյանը՝ «Երկաթյա Գևորգ»:

Հայաստանի սովետական սոցիալիստական հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեի 1923 թվականի նոյեմբերի 15-ի «Միլիցիայի տոնակատարության օր հաստատելու մասին» որոշման համաձայն 1920 թվականի դեկտեմբերի 20-ը համարվել է Հայաստանի Սովետական միլիցիայի կազմավորման օր: Ցուցափեղկերը պատմում են Հայաստանում սովետական իշխանության համար պայքարում, բանդիտական խմբերի վերացմանը, սոցիալիստական շինարարությանը միլիցիայի աշխատակիցների մասնակցության մասին: Ցուցափեղկերում փաստաթղթեր են, թերթերի հոդվածներ, գրքեր, զինվորական մասունքներ, տարբեր ժամանակաշրջանների համազգեստներ, շքանշաններ, պատվոգրեր և ներքին գործերի մարմինների ծառայողներին պատկանող տարբեր փաստաթղթեր: ՀՍՍՌ ՆԳ ժողովրդական կոմիսարիատի 1920-1940 թվականների

գործունեությանը նվիրված ստենդը մանրակրկիտ լուսաբանում է նշված ժամանակաշրջանը:

Լուսաբանված են ՆԳ միլիցիայի օպերատիվ բաժնի պետ Մամիկոն Կարապետյանի լուսանկարը, ինքնակենսագրությունը, պատվոգիրը, Երևանի միլիցիայի դպրոցի պետի ուսումնական մասի տեղակալ Գեորգի Հախումյանի լուսանկարը, կենսագրությունը, Հազարապետ Գրիգորյանի լուսանկարը, փաստաթղթերը: Պատկերված է նաև 1940-1942 թվականների ՆԳ նախարարի տեղակալ Սուրեն Թովմասյանը, որը հետագայում վարել է նաև Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարի պատասխանատու պաշտոնը:

5-րդ մասը լուսաբանում է 1941 թվականից մինչև 1945 թվականը Հայրենական Մեծ պատերազմի հերոսական մարտերում միլիցիայի աշխատակիցների մասնակցության փառավոր էջերը:

Պատերազմի առաջին օրերին Հայաստանից ռազմաճակատ են մեկնել միլիցիայի մոտ 300 աշխատակից և հերոսաբար պայքարել են մեր Հայրենիքի ազատության համար: Նրանցից մի քանիսին չվիճակվեց վերադառնալ ռազմաճակատից: Իրենց անունները հավերժ փառքով պսակեցին միլիցիայի աշխատողներ՝ Սովետական միության հերոս Սուրեն Առաքելյանը, որը կրկնեց Ալեքսանդր Մատրոսովի սխրանքը, Լևոն Հակոբյանը, Գևորգ Կիրակոսյանը, Վլադիմիր Դալլաքյանը, Վահան Ասրյանը, Գրիգոր Աբովյանը, Սերքեյ Սարգսյանը և շատ ուրիշներ:

Նշված ժամանակաշրջանը լիարժեք ցուցադրելու նպատակով թանգարանին էական օգնություն է ցուցաբերել Հայաստանի Ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանը: Ա.Վիրաբյանի օգնությամբ մեզ հաջողվել է 2015թ. մայիսին Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ Ռուսաստանի Դաշնության Ազգային արխիվից ստանալ ՀՍՍՌ ներքին գործերի նախարարության աշխատակիցներ, Սովետական միության հերոսներ Սուրեն Սմբատի Առաքելյանին, Այդին Հարությունի Հարությունյանին, Սուրեն Գրիգորի Պետրոսյանին և Անդրանիկ Ալեքսանդրի Մանուկյանին Սովետական միության հերոսի կոչում շնորհելու վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության

հրամանագրերի պատճենները՝ նախագահության նախագահ Մ.Կալինինի ստորագրությամբ, որոնք տեղադրված են թանգարանում նշված հերոսների դիմանկարների հետ մեկտեղ: Դիմանկարների հետ միասին տեղադրված է նաև Անդրանիկ Մանուկյանի կիսանդրին: Տեղին է նշել, որ ՌԴ նախագահի 2011թ. մայիսի 5-ի «Անապա քաղաքին «Զինվորական փառքի քաղաք» Ռուսաստանի Դաշնության պատվավոր կոչում շնորհելու մասին» թիվ 586 հրամանագրում նշված է, որ Անապայի հողում իր անմահ հերոսությունն է կատարել Սովետական միության հերոս Սուրեն Առաքելյանը՝ կրկնելով Ալեքսանդր Մոտրոսովի հերոսությունը:

Հարկ է նշել նաև, որ 2015 թվականի մայիսի 8-ին Կրթահամալիրի տարածքում մեծ հանդիսավորությամբ բացվեց նշված հերոսների հուշապատ, որում նրանք պատկերված են արդեն հերոսացման ժամանակաշրջանի լուսանկարներով: Միջոցառմանը մասնակցել են մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձինք և Երևանի թիվ 32 միջնակարգ դպրոցի սաները, որտեղ 1980 թվականից մինչև իր մահը՝ 1989 թվականը որպես ռազմագիտության ուսուցիչ աշխատել է Սովետական միության հերոս Ա.Մանուկյանը:

Պատկերված է նաև «Առաջ կոմունիստներ» լուսանկարը և «Սրբազան պատերազմ» բանաստեղծությունը, որոնք ոգևորում էին զինվորներին հայրենիքը թշնամուց ազատագրելու համար:

Թանգարանում լուսաբանված են նաև 1954 թվականից մինչև 1959 թվականը Հայաստանի ներքին գործերի նախարարի տեղակալ, միլիցիայի վարչության պետ, միլիցիայի գեներալ-մայոր Համիկ Ավետիքյանի, 1968 թվականին ՆԳ նախարարի տեղակալ, միլիցիայի գեներալ-մայոր Հակոբ Պողոսյանի և մյուսների գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

6-րդ մասը լուսաբանում է Հայաստանի միլիցիայի 1960-1980 թվականները:

Ինչպես արդեն նշեցինք թանգարանը բացվել է 1977 թվականի նոյեմբերին ՀՍՍՀ ՆԳ նախարար, ներքին ծառայության գեներալ-լեյտենանտ Ե.Պատալովի հրամանով: 2 տարի հետո թանգարանի գործունեությունը ուսումնասիրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի կողմից և 1979 թվականի սեպտեմբերի 7-ին ընդունվել է քաղաքային կոմիտեի բյուրոյի որոշում:

Բյուրոյի որոշմամբ բարձր է գնահատվել թանգարանի գործունեությունը՝ համարելով այն Երևան քաղաքի աշխատավորության, երիտասարդության կոմունիստական դաստիարակության, միլիցիայի անձնակազմի շրջանում մարտական և աշխատանքային ավանդույթների պրոպագանդման, ՆԳՄ մարմինների հեղինակության բարձրացման կարևոր կենտրոն:

Քաղկոմի բյուրոն հանձնարարել է Երևան քաղաքի կուսակցական շրջանային կոմիտեներին և ՀԼԿԵՄ քաղկոմին կազմակերպել Երևան քաղաքի աշխատավորական կոլեկտիվների, բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների ուսանողների, դպրոցների սովորողների թանգարան կոլեկտիվ այցելություններ:

Հայկական ՍՍՀ Կուլտուրայի մինիստրության 1984 թվականի հուլիսի 24-ի թիվ 375 հրամանով թանգարանին շնորհվել է «Ժողովրդական թանգարան» պատվավոր կոչում, իսկ 1986 թվականին նշված մինիստրության կողմից մշակույթի արժեքները հավաքելու, պահպանելու և պրոպագանդելու գործում ունեցած ակնառու հաջողությունների համար պարգևատրվել է պատվոգրով:

Միլիցիայի գեներալ-մայորներ Գուրգեն Ակապովի համազգեստները և Ալեքսեյ Հեքիմյանի վերաբերյալ ստենդը լուսաբանում են քաղաքացիական պատերազմի մասնակցի և կոմպոզիտորի գործունեությունը: Լուսաբանված են նաև ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության կազմավորման 50-ամյակին նվիրված միջոցառումները: Ընդորում քննչական գլխավոր վարչությունը 2013 թվականին դուրս է բերվել ՀՀ ոստիկանության համակարգից:

Թանգարանում լուսաբանված է Խալիկովի սխրանքը: 1978 թվականի ապրիլի 6-ին Երևան քաղաքում հասարակական կարգը պահպանելիս հանցագործի ձեռքից զոհվել է ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի միլիցիայի ավագ սերժանտ, ազգությամբ ուզբեկ Խալիկովը, որը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ետմահու պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով: Խալիկովը իր կյանքը տվել է հայ եղբայրների և քույրերի կյանքերը, ինչպես նաև մեր բազմազգ Մեծ Հայրենիքի շահերը պահպանելու համար:

Երևանի մետրոյի շինարարությանը 1980 թվականի նոյեմբերին, դեկտեմբերին և 1981 թվականի հունվարին մասնակցել են ՆԳ մինիստրության

միլիցիայի կրտսեր հրամկազմի պատրաստման դպրոցի սաները, քաղաքային վարչության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ, ռազմականացված հրշեջ խմբերի մարտիկներ: Այդ հերոսամարտը իր տեղն է գտել նաև թանգարանում:

Թանգարանում լուսաբանված են նաև Արցախյան հերոսամարտում և Սպիտակի աննախադեպ երկրաշարժի ժամանակ ոստիկանության կատարած աշխատանքները:

Զենքի համար նախատեսված պահարաններում սահմանված կարգով տեղադրվել են ԱՄՆ, ԽՍՀՄ, Իտալական, Բելգիական, Անգլիական, Հայկական, Չեխական թվով 22 զենք: